

## ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը մասնակցել է Քաջարանի թիվ 1 նախակրթարանի բաց դասին

Նոյեմբերի 25-ին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը Քաջարանում մասնակցել է թիվ 1 նախակրթարանի <<Սուրբ հաց>> խորագիրը կրող բաց դասին: Միջոցառմանը ներկա էին նաև Քաջարանի քաղաքապետ Վարդան Գևորգյանը, ԶՊՄԿ-ի գործադիր տնօրեն Նիլ Սթիվենսոնը և այլ հյուրեր:

Տեր Շիրակ քահանա Խանոյանի օրհնության արարողությունից հետո երեխաները բանաստեղծություններ, երգեր ու ասույթներ նվիրեցին հացին: Միջոցառման կազմակերպիչները համոզմունք հայտնեցին, որ նման միջոցառումները նպատակ ունեն երեխաների մեջ աշխատավոր մարդու նկատմամբ մանկուց սերմանել:

Ողջունելով միջոցառումը՝ մարզպետի տեղակալ Վ.Գրիգորյանն իր երախտագիտության խոսքում բարձր գնահատեց հայ ժողովրդի առանձնահատուկ սերը աշխատանքի և նրա արդյունքը հանդիսացող հացի նկատմամբ և կարևորեց մատաղ սերնդի մեջ դրանց նկատմամբ սիրո սերմանումը: